ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի.

1. Հոդված 2-ի նոր խմբագրությամբ «**Հոդված 29. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները**» հոդվածի 2-րդ՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պետք է ապահովեն, որ **իրենց ընտանիքի անդամները և իրենց հետ փոխկապակցված անձինք** չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն. . . . » մասում ընտանիքի անդամները հանրային ծառայության մասին օրենքի հոդված 33-ի 8-րդ մասում նույնպես ճանաչված են փոխկապակցված անձինք: Միաժամանակ, եթե հիմք ընդունենք ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված հանրային ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին նախագծի՝ https://www.e-draft.am/projects/4314/about հոդված 33-ի 8-րդ մասում փոխկապակցված անձանց նոր ընդլայնված շրջանակը, ապա այն նվերների ընդունման սահմանափակման պահպանման տեսանկյունից շատ լայն է, և պաշտոնյան հնարավորություն չի ունենալու կառավարել բոլոր փոխկապակցված անձանց կողմից ստացվող նվերները, որոնք կարող են պայմանավորված լինել կամ ազդեցություն ունենալ իր պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ:

   Առաջարկ
   Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման վրա ազդեցություն ունեցող նվերների ստացման սահմանափակման համար սահմանել փոխկապակցված անձանց ավելի նեղ շրջանակ. Օրինակ՝ ընտանիքի անդամներ և մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձինք:

2. Նույն հոդվածի 5-րդ մասում նշվում է, որ «Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերները **ենթակա են իրացման «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով սահմանված կարգով** կամ անհատույց օգտագործման տրամադրման»: Պետությանը կամ համայնքին հանձնված վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող նվերի հրապարակային սակարկությունների եղանակով օտարելը սակարկությունների կազմակերպման ծախսերի տեսանկյունից արդյունավետ գործիք չի կարող համարվել: Շատ դեպքերում սակարկությունների կազմակերպման ծախսերը կարող են գերազանցել նվերների շուկայական արժեքը: Բացի այդ, միայն Կառավարության որոշմամբ կսահմանվեն այն պետական կամ համայնքային մարմինները, որոնք պատասխանատու են լինելու նշված նվերների ընդունման ու իրացման համար: Կարծում ենք, որ նույն որոշմամբ էլ պետք է սահմանվեն պետությանը և համայնքին հանձնված նվերները անհատույց օգտագործման տրամադրելու կարգերը: Միջազգային պրակտիկայում, ելնելով ստացված նվերի տեսակից և գործառնական նշանակությունից, տարածված է նաև նման նվերները մանկատներին, սոցիալական հաստատություններին նվիրաբերելը, ինչպես նաև առանձին դեպքերում բարձրաստիճան պաշտոնյաների մասով, օրինակ՝ երկրի նախագահի, վարչապետի, ԱԺ

[1] https://www.e-draft.am/projects/4336/about

նախագահի և այլ համարժեք պաշտոնյաների խմբի համար՝ տվյալ մարմնում նվերների հուշապատ կամ ցուցադրություններ կազմակերպելը:

Առաջարկ
Պետական և համայնքային մարմինների կողմից պաշտոնեական պարտականություններով պայմանավորված ստացված նվերների իրացման գործընթացում չսահմանափակվել միայն սակարկությունների մեխանիզմով, այլև նախատեսել իրացման առավել լայն և ընդգրկուն մեթոդներ:

3. Նույն հոդվածի 9-րդ մասում նշվում է, որ «Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես **հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին**, **դատավորը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը՝ Էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին**՝ իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:»

Պաշտոնեական պարտականությունների իրականացմամբ պայմանավորված նվերների ստացման մասին հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից հայտնելու մասին գործընթացը խնդրահարույց է: Մասնավորապես, քաղաքացիական ծառայության գործընթացով պայմանավորված **ՀՀ Ոստիկանության, Մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ Դատական դեպարտամենտի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմերում** դեռևս ձևավորված չեն բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը[2]: Մյուս կողմից, հանրային ծառայության մասին օրենքի հոդված 46-ը անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսում է բարեվարքության հարցերով կազմակերպչի պաշտոնը, որը միայն պետք է խորհրդատվություն տրամադրի տվյալ մարմնի հանրային ծառայողներին: Արդյունքում, բարեվարքության հարցերով կազմակերպիչը հնարավորություն չի ունենալու խորհրդատվական կարծիք հայտնելու տվյալ մարմնի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց:

ԱԺ պատգամավորների մասով «ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի» հոդված 162-ի 6-րդ մասով պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է, որ «. . . մինչև ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում և երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողով ստեղծվելուց հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) աշխատանքի է ընդունվում և ազատվում աշխատանքից Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան»: ԱԺ «Իմ քայլը» խմբակցության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և

[2] https://transparency.am/hy/publication/pdf/244/1351

լրացումներ կատարելու մասին» (Խ-840-19.01.2021-ՊԻ-011/0) օրենքի նախագծի հոդված 9-ում «ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի» հոդված 162-ի 6-րդ մասի խմբագրման արդյունքում, ի լրումն էթիկայի հանձնաժողովի քարտուղարի և գործավարի, նախատեսում է բարեվարքության հարցերով կազմակերպչի պաշտոն, որը աշխատանքի է ընդունվում և ազատվում քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության համապատասխան[3]:

Դատավորների, դատախազների մասով նվերների մասին հայտնելու գործընթացում իրենց էթիկայի հանձնաժողովներին դիմելու գործող ընթացակարգի պահպանումը նույնպես խնդրահարույց է, քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դատավորների կամ դատախազների էթիկայի հանձնաժողովների կողմից նվերների պաշտոնեական պարտականություններով պայմանավորված լինելու հանգամանքների կամ դրա բացակայության մասին կարծիքների հետ անհամաձայնության դեպքում ստիպված է լինելու իրականացնել էթիկայի հանձնաժողովի եզրակացության (խորհրդատվական կարծիքի) վերանայման վարույթ:

Այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հայտնելու և խորհրդատվական կարծիք ստանալու լիազորությունը նույնպես գործնականում կիրառման տեսանկյունից ունի բացեր: Նախ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդիսանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների բարեվարքության համակարգի կիրարկումը ապահովող «քվազի դատական» մարմին: Այն ենթադրում է, որ կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների ստացման սահմանափակման խախտումների համար կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն է կիրառելու պատասխանատվության միջոցներ, այդ թվում վարչական: Հետևաբար, միաժամանակ ստանձնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով ծառայողական պարտականություններով պայմանավորված նվերների մասով խորհրդատվական կարծիքի ներկայացման պարտականություն, դրանց խախտումների մասով պատասխանատվության միջոցների կիրառումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կամ պետք է բացառվի կամ վերապահվի այլ պետական կամ համայնքային մարմինների:

Առաջարկ

- **Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթում ներառել նաև «ՀՀ Ոստիկանության, Մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ Դատական դեպարտամենտի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմերում» բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ներդրումն ապահովող կարգավորումներ:**
- **«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով հոդված 46-ի 2-րդ մասը լրացնել «հանրային պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:**
- **«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի ընդունմամբ սահմանել ԱԺ աշխատակազմում բարեվարքության հարցերով կազմակերպչի**

[3] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=60896, վերջին անգամ դիտվել է 23. 03. 2021թ.

հաստիք, որը կապահովի, ինչպես ԱԺ էթիկայի հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այնպես էլ կիրականացնի պատգամավորներին բարեվարքության հարցերով խորհրդատվության տրամադրում:

- **Օրենքի նախագծի հոդված 2-ի 9-րդ և 10-րդ մասերից հանել «դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը՝ էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին» բառերը, խորհրդատվական կարծիքի ներկայացման պատասխանատվությունը վերապահել տվյալ մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպչին:**

4. Նույն հոդվածի 10-րդ մասում նշվում է, որ «Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին տեղեկություն ստանալուց հետո հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը՝ էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ **իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով**»: Եթե պաշտոնյան արդեն իսկ ունի կասկածներ, որ իր կամ իր հետ փոխկապակցված անձի կողմից ստացված նվերը պայմանավորված է կամ կարող է ազդել իր պաշտոնեական պարտականությունների կատարման վրա, ապա այդ դեպքերում նա կարիք չպետք է ունենա անպայմանորեն հայտնելու բարեվարքության հարցերով կազմակերպչին կամ այլ օղակներին՝ ստանալու «իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք»: Օրենսդրական նման պարտադիր պահանջը, ըստ էության հանրային պաշտոն զբաղեցնող անձից կամ ծառայողից վերցնում է վարքագծի կանոնագրքով սահմանված նվերների ընդունման, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվելիք նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելու կամ սահմանված կարգավորումները պահպանելու պատասխանատվությունը: Այդ պատասխանատվությունը ըստ էության դրվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի (դատավորների, դատախազների էթիկայի հանձնաժողովների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի) վրա՝ վերջինիս կողմից տրամադրվող խորհրդատվական կարծիքի տեսքով: Մինչդեռ, նվերը ընդունելու կամ հանձնելու վերջնական որոշումը պետք է պատկանի կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձին և ծառայողին, իսկ բարեվարքության հարցերով կազմակերպիչը կարող է նրան տրամադրել միայն խորհրդատվություն՝ օրենսդրական կարգավորումների ու պահանջների վերաբերյալ, սակայն ոչ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի լուծումների վերաբերյալ կարծիք, որով պետք է պատասխանի՝ վերցնել նվերը, թե՝ ոչ: Արդյունքում, բարեվարքության հարցերով կազմակերպիչը կարող է հայտնվել «մեղադրյալի» կարգավիճակում:

Առաջարկ
Օրենքի նախագծի 9-րդ և 10-րդ մասերից հանել «իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք» բառերը՝ դրանք փոխարինելով «մասնագիտական խորհրդատվություն» բառերով:

5. Հոդված 3-ի նոր խմբագրությամբ «Հոդված 30. Նվերների հաշվառումը և հանձնումը» հոդվածի 7-րդ մասում նշվում է, որ «Նվերների հաշվառման, հանձնման և գնահատման կարգը, Ռեեստրում լրացման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում

փոփոխություններ կատարելու կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը»: Այդուհանդերձ, օրենսդրական կարգավորումից դուրս է մնացել նվերների հաշվառման և հանձնման ռեեստրից տվյալների՝ հանրությանը հասանելիության հարցը՝ դրանց հրապարակման մասին դրույթը:

Առաջարկ
Օրենքի նախագծի հոդված 3-ի 7-րդ մասում «Ռեեստրում լրացման» բառերից հետո ավելացնել « և հրապարակման» բառերը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի.

6. Հոդված 2-ում և 3-ում բացակայում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման գործառույթի վերապահման մասով լրացումը: Նման պահանջ սահմանված է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման հավելված 1-ի 68-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «օրենսդրական փոփոխությունների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով վերապահված գործառույթներից զատ անհրաժեշտ է վերապահել.
8) բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքների համակարգումը»: Նույն հոդվածներում կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթների ու լիազորությունների շարքում բացակայում է նաև նվերների ռեեստրից հրապարակման ենթակա տվյալների սահմանման և հրապարակման լիազորության վերապահման մասով լրացումը:

Առաջարկ
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի հոդվածներ 23-ը և 24-ը լրացնել «պաշտոնական պարտականություններով պայմանավորված թույլատրելի նվերների ռեեստրի վարման, հաշվառման և գնահատման կարգերի մշակումը և ռեեստրից հանրությանը հասանելի տվյալների հրապարակումը» գործառույթներով:

Ընդհանուր նկատառումներ

«Թրանսպարենսի Ինթենեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից 2021թ. մշակված «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում» ուսումնասիրության[4], ինչպես նաև «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը Հայաստանի հանրային կառավարման համակարգում»[5] զեկույցում, վերլուծության են ենթարկվել հանրային ծառայության ոլորտում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտների օրենսդրական կարգավորումները, վեր են հանվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հանրային ծառայության առանձին ոլորտների գործունեությունը կանոնակարգող այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության

[4] https://transparency.am/hy/publication/pdf/256/9410
[5] https://transparency.am/hy/publication/pdf/244/1351

հարցերի, այդ **թվում նվերների ընդունման արգելքի** առնչությամբ առկա բացերը, անհամապատասխանությունները, կրկնությունները և մարտահրավերները, մշակվել են առաջարկություններ միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին և ուղեցույցների պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Զեկույցներում տեղ գտած առաջարկությունները ուղղված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեվարքության քաղաքականության բարեփոխումների մշակմանը և իրականացմանը, օրենսդրության կատարելագործման միջոցով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, **նվերների ընդունման արգելքի**, իրավիճակային շահերի բախման կանխարգելման նոր կառուցակարգերի ու գործիքակազմերի մշակմանը:
Քննարկման ներկայացված «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերի փաթեթում ներառված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կարիք ունեն հարմոնացնելու ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված[6] համանուն օրենսդրական նախագծերի փաթեթի հետ, որոնք հիմնովին չեն լուծում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, շահերի բախման պահանջների պահպանման քաղաքականության ոլորտում ԹԻՀԿ-ի կողմից մշակված զեկույցներում արձանագրված հիմնարար խնդիրները:
ԹԻՀԿ-ն գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթի ընդունումը չի հանգեցնելու կոռուպցիայի կանխարգելման ոլորտում նշանակալի փոփոխությունների և չի լուծելու գործնականում ի հայտ եկած հիմնարար խնդիրները:

Առաջարկ

- **Ներկայացված հանրային ծառայության մասին և հարակից օրենքներում օրենսդրական փոփոխությունների փաթեթի ընդունումը առկախել և միավորել ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված համանուն օրենսդրական փաթեթի հետ:**
- **ՀՀ կառավարության կողմից ձևավորել աշխատանքային խումբ՝ ընդգրկելով ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի, ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի, հակակոռուպցիոն ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:**
- **Աշխատանքային խմբին փորձագիտական օժանդակություն կարող է ցուցաբերել հակակոռուպցիոն բարեվարքության ոլորտում դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի փորձագետների խումբը:**

Աշխատանքային խմբի և փորձագիտական թիմի կողմից մշակված համակողմանի, համապարփակ և համակարգված լուծումներով ձևավորված հանրային ծառայությունում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, **նվերների ընդունման արգելքի** օրենսդրական նոր լուծումներով փաստաթղթերի փաթեթների մշակումը

[6] https://www.e-draft.am/projects/4314/about

հնարավորություն կտա ձեռնպահ մնալու հատվածական, կցկտուր օրենսդրական փոփոխություններ կատարելու պրակտիկայից և կառուցելու հանրային ծառայության ոլորտում բարեվարքության ինստիտուցիոնալացված համակարգ: